ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ամազոն Իմպորտ ՍՊԸ-ն ԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/19 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Կիլոբեյզեր ԴՆԹ և ՌՆԹ սինթեզատոր	Կիլոբեյզեր ԴՆԹ և ՌՆԹ սինթեզատոր	Կիլոբեյզեր ԴՆԹ և ՌՆԹ սինթեզատոր	Կիլոբեյզեր ԴՆԹ և ՌՆԹ սինթեզատոր	27x33 սմ չափսերով կիլոբեյզերը տեղավորվում է ցանկացած լաբորատոր սեղանի վրա: Կիլոբեյզեր ԴՆԹ և ՌՆԹ սինթեզատորն աշխատում է ազոտի կամ արգոն գազի ճնշմամբ և, հետևաբար, պահանջում է համապատասխան գազի մատակարարում իր ֆունկցիոնալության համար: Կիլոբեյզերը ուղղակիորեն կառավարելի է ներառված սենսորային էկրանով: Այն ցույց է տալիս սինթեզի գործարկման առաջընթացը և կարևոր

						տեղեկություններ է տալիս արտադրանքի մասին: Եթե սարքը միացված է Wi-Fi-ով, ապա այն կարելի է կառավարել ինտերնետին միացված ցանկացած սարքից: Ի տարբերություն սովորական ԴՆԹ սինթեզատորների, կիլոբեյզերը ապահովված է ցանկացած հեղուկի արտահոսքից՝ շնորհիվ արտոնագրված միկրոհեղուկային չիպի և քարթրիջների տեխնոլոգիայի: Միանգամյա օգտագործման միկրոհեղուկային չիպը ձևավորում է փակ սինթեզի համակարգ, որը նաև սինթեզի ընթացքում համակարգը պաշտպանում է աղտոտումից: Ռեագենտների քարթրիջները առաքվում են լցված վիճակում: Սինթեզի համար լրացուցիչ ռեակտիվների կարիք չկա: Ստացված հեղուկ թափոնները նույնպես հավաքվում են քարթրիջում: Մեկ հիմքի ավելացման համար ընդամենը 2,5 րոպեանոց ցիկլի և 30-50 րոպե հետմշակման դեպքում ԴՆԹ-ի և ՌՆԹ-ի օլիգոների սինթեզը «Կիլոբեյզերով» մինչև 6 անգամ ավելի արագ է, քան այլ

						սինթեզատորներով և սարքավորումը պատրաստ է լինում հաջորդ սինթեզի համար ընդամենը մի քանի ժամում: Միկրոհեղուկային չիպը պարունակում է մեկ միկրո աշտարակ, որի վրա տեղի է ունենում օլիգոնուկլեոտիդի սինթեզը: Չիպը դառնում է անօգտագործելի մեկ սինթեզի ավարտից հետո և պետք է հեռացվի: Սինթեզն ունի առնվազն 300 pmol երաշխավորված ընդհանուր ելք: Եթե կիրառման համար անհրաժեշտ են ճշգրիտ տվյալներ, ապա խորհուրդ է տրվում չափել օլիգոնուկլեոտիդի կոնցենտրացիան սինթեզից հետո: Ընդհանուր առմամբ, օլիգոյի որակը բավականին բարձր է ստացվում, այնպես որ, եթե 20 նուկլեոտիդների դեպքում ռեակցիայի ելքը 99,5% է, ապա նույնը, ընդհանուր առմամբ, ճիշտ է 50 կամ 80 նուկլեոտիդի դեպքում: Կարելի է հաշվարկել 0,995^50=0,778, այնպես որ կարելի է 300pmol ելքի դեպքում 50 հիմքանի օլիգոյի համար կարելի է ակնկալել ~78% ռեակցիայի ելք ամբողջական երկարությամբ օլիգոների սինթզի

						համար: Սինթեզի համար անհրաժեշտ ռեագենտի մեկ քարթրիջը պարունակում է բոլոր անհրաժեշտ ռեակտիվները ԴՆԹ-ի կամ ՌՆԹ-ի անհրաժեշտ մոլեկուլի սինթեզի համար: Սարքը հնարավորություն է տալիս նաև ֆլուորեսցենտային կամ այլ կերպ նշված օլիգո ԴՆԹ- կամ ՌՆԹ-ներ սինթեզել ռեալ ժամանակի ՊՇՌ-ի կամ այլ նպատակների համար: Սարքի հետ պատվիրվում է նաև սինթեզված օլիգոնուկլեոտիդների մաքրման համար անհրաժեշտ մագնիսական նանոմասնիկների վրա հիմնված լրակազմը և այդ նպատակին հարմարեցված մագնիսական սարքավորումը: Սարքի աշխատանքի համար անհրաժեշտ 200 մթն ճնշման ազոտի բալոնը համապատասխան ռեդուկտորով ձեռք կբերվեն տեղում, ինստիտուտի միջոցներով: Երաշխիքային ժամկետ՝ 2 տարի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջների համաձայն ցանկացած հղման դեպքում կիրառելի են «կամ համարժեք»

					բառերը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Амазон Импорт ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/19 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1	Կիլոբեյզեր ԴՆԹ և ՌՆԹ սինթեզատոր	Կիլոբեյզեր ԴՆԹ և ՌՆԹ սինթեզատոր	Կիլոբեյզեր ԴՆԹ և ՌՆԹ սինթեզատոր	Կիլոբեյզեր ԴՆԹ և ՌՆԹ սինթեզատոր	Kilobase размером 27x33 см помещается на любом лабораторном столе. Синтезатор ДНК и РНК с тысячными основаниями работает под давлением азота или аргона, поэтому для его функционирования требуется подходящая подача газа. Kilobase напрямую управляется с помощью прилагаемого сенсорного экрана. Он показывает ход выполнения синтеза и предоставляет важную информацию о продукте. Если устройство подключено через Wi-Fi,

						им можно управлять с любого устройства, подключенного к Интернету. В отличие от обычных синтезаторов ДНК, килобаза герметична благодаря запатентованной технологии микрофлюидного чипа и картриджа. Одноразовый микрофлюидный чип образует замкнутую систему синтеза, которая также защищает систему от загрязнения во время синтеза. Картриджи с реагентами поставляются заполненными. Для синтеза не требуются дополнительные реагенты. Образовавшиеся жидкие отходы также собираются в картридже. При времени цикла всего 2,5 минуты на добавление основания и 30-50 минут последующей обработки синтез олигонуклеотидов ДНК и РНК с килобазами происходит до 6 раз быстрее, чем с другими синтезаторами, и оборудование готово к следующему синтезу. всего за несколько минут в час. Микрожидкостный чип содержит

						одну микробашню, на которой происходит синтез олигонуклеотидов. Чип приходит в негодность после одного синтеза и подлежит удалению. Синтез имеет гарантированный общий выход не менее 300 пмоль. Если для применения требуются точные данные, рекомендуется измерить концентрацию олигонуклеотида после синтеза. В целом качество получаемых олигонуклеотидов довольно высокое, так что если выход реакции составляет 99,5% для 20 нуклеотидов, то же самое обычно верно и для 50 или 80 нуклеотидов. Можно рассчитать 0,995 ^ 50 = 0,778, поэтому можно ожидать ~ 78% выхода реакции для синтеза полноразмерных олигонуклеотидов для олигонуклеотидов из 50 оснований при выходе 300 пмоль. Один картридж с реагентами для синтеза содержит все необходимые реагенты для синтеза необходимой молекулы ДНК или РНК. Устройство также позволяет синтезировать флуоресцентные или иным образом

					меченные олигонуклеотиды ДНК или РНК для ПЦР в реальном времени или других целей. Вместе с прибором заказываются также комплект на основе магнитных наночастиц и приспособленное для этого магнитное оборудование. Баллон с азотом под давлением 200 мт с соответствующим редуктором, необходимый для работы установки, будет закуплен на месте на средства института. Гарантийный срок: 2 года В соответствии с требованиями статьи 13, пункта 5 Закона РА «О закупках» слова «или эквивалент» применимы в любой ссылке.